

Արջուկ գուլպայից

Թվում է, թե փափուկ խաղալիք կարելը բազմազան գիտելիքներ ու կարելու վարպետություն պահանջող բարդ գործ է:

Մենք ցույց կտանք, որ ձեռքի տակ ունենալով միայն հին, ոչ պետքական գուլպա, կարելի է առանց որևէ հատուկ գիտելիքների ու նյութերի կարել գեղեցիկ խաղալիք:

Հիմա մենք կսովորենք կարել արջուկ: Միաժամանակ կսովորենք կարի որոշ նրբություններ:

Անհրաժեշտ է

Այն, առանց ինչի հնարավոր չէ կարել. հին գուլպա (միագույն), թելեր (գուլպայի գույնի), ինչպես նաև սև ու սպիտակ թել, ասեղ, մկրատ, լցոն (բամբակ կամ սիլտեպոն): Մնացած անհրաժեշտ բաները կվերցնենք ձեռքի տակ եղած իրերից:

1. Վերցնում ենք հին գուլպա:



2. Այժմ անհրաժեշտ է ձևել ապագա արջուկի մասերը:

Ձևելու ընթացքում կտորին ձև ենք տալիս և կտրատում կարելու համապատասխան ձևով: Ձևելու համար հաճախ օգտագործում են պատրաստի թղթե կամ սովորաբար շաբլոնե դետալներ:

Մինչ կտորը կտրատելը անհրաժեշտ է նախևառաջ գծանշել անհրաժեշտ դետալները: Գծանշման համար օգտագործում են այնպիսի նյութեր, որոնք կտորի վրա լավ երևում են և հետքեր չեն թողում: Չի կարելի օգտագործել գրիչ կամ ֆլումաստեր: Կարելի է բաց գույնի մատիտ օգտագործել, բայց դրա գծանշումը թույլ կլինի: Ավելի նպատակահարմար է օգտագործել կավճի կամ օճառի կտոր: Ուղղեք գուլպան և երեսային կողմով դրեք սեղանին: Կրան նկարեք ահա այսպիսի գծեր:



3. Մկրատի օգնությամբ կտրում ենք գլուխը.



4. Գլխի ներքևի մասից նեղ կտոր ենք կտրում: Ստացված անցքից արջուկի գլխի մեջ լցոն պետք է արվի:



5. Վերցնենք գուլպայի մնացած հատվածը և արջուկի մնացած դետալները կտրատենք: Այժմ մարմնի հերթն է: Ուղղում ենք գլխի կտրելուց հետո առաջացած կտրվածքը:



6. Կտրում ենք թաթիկները.



Կրունկի հատվածի դուրս պրծած մասի համար անհանգստանալու կարիք չկա: Այն կլինի մեր արջուկի տուտուզիկը: Մենք կարում ենք նստած արջուկ:


7. Գուլպայի ռեզիսի հատվածում մնացած 2 փոքրիկ կտորները ևս հավասարեցնում ենք: Դրանք կլինեն մեր արջուկի առջևի թաթիկները:



Արջուկ կարելու համար անհրաժեշտ դետալներն արդեն պատրաստ են:

Սկսում ենք կարելու գործընթացը:

8. Սկզբում վերցնում ենք ձևած գլուխը: Նրա վերին հատվածը (ականջների մասը)բաց է, դրա համար անհրաժեշտ է այդ եզրը կարել: Տեսանելի լինելու համար թելը կարմիր գույնով է երանգավորված: Կարելու համար գլխի դետալը շուռ ենք գալիս հակառակ կողմի, վերցնում գուլպայի գուլյնի թելով թելած ասեղը և պարուրող կարով կարում եզրը:



Կարը կատարվում է նկարի նման`



Պարուրող կարով սովորաբար կարում են եզրերը, ինչպես նաև այն կիրառում են երկու դետալների իրար կցելու համար: Այն նպատակահարմար է նրանով, որ չի թողում եզրերը քանդվեն և ամուր է: Ահա արջուկի կարված եզրերով գլուխը.



9.Արջուկի գլուխը շուռ եկք տալիս դեպի ճիշտ երեսը և լցնում լցնով:



Սկզբում լավ լցրեք ակահջները, այնուհետև մնացած հատվածը.



10. Նմանապես կարում ենք մարմնի ներքևի հատվածը: Դետալը շուռ ենք տալիս, կարում պարուրող կարով ու կրկին շուռ տալիս դեպի ճիշտ երեսը:



11. Մարմինը ևս լցունում ենք.



Հաջորդ քայլը գլխի և մարմնի բաց եզրերը փակելն է:

12. Վերցրեք թելած ասեղը և մարմնի բաց եզրը կարենք ամենահասարակ կարով.



Կարերը պետք չէ շատ մանր անել, դրանք կարող են լինել 5-8մմ:



13. Այժմ թելի ծայրը քաշեք և ամրացնելով այն, ծայրերը կտրեք:



14. Նույն գործողությունը կատարում ենք գլխի բաց եզրի հետ:



15. Հաջորդ քայլի համար մեզ անհրաժեշտ է սպիտակ տրիկոտաժե կտոր: Սպիտակ կտորից օվալ կտրենք մոտավորապես արջուկի մոռլթի կեսի չափով:



16. Այդ օվալը կարում ենք արջուկի մռուժիկի ներքևի հատվածում: Նախապես այդ օվալի հատվածում մի փոքր բամբակի կտոր դրեք, որպեսզի մռուժի այդ հատվածը մի քիչ դուրս պրծած լինի: Օվալը ամրացնելու համար կարելի է կիրառել այս հասարակ պարուրակարը.



17. Կարված մարմինն ու գլուխն իրար ենք կպցնում (կարում):



18. Այժմ առջևի թաթիկների հերթն է: Դրանք կարում ենք ճիշտ
այնպես, ինչպես գլուխն ու մարմինը՝ դետալը շուռ ենք տալիս,

կարում բաց թողնելով ներքին եզրը, շուռ տալիս դեպի ճիշտ երեսը և
լցնում:



19. Թաթիկները պարուրող
կարով ամրացնում ենք մարմնին: Դրանք պետք է տեղադրված լինեն
մարմնի կողքերում՝ գլխից ներքև:



20. Քթի համար գտեք փոքրիկ սև կոճակ, ցանկալի է ելուստով, ոչ թե ծակերով:





21. Բերանը «պատրաստում» ենք ընդամենը երեք կարի միջոցով: Սկսում ենք կարել քթի տակից:



22. Աչքերը պատրաստելու համար բազմաթիվ եղանակներ կան՝
ա) սև հոլլոունքներից



բ) սև կոճակներից



գ) 4 անցքանի սպիտակ կոճակներից, որոնք ամրացնում ենք խաչաձև




դ) Սև կտորե շրջանակներից`



ե) Սպիտակ շրջանակների վրա ամրացված սև շրջակներից



23. Արջուկի վրա վերջին աշխատանքը նրա կուրծքն է: Սպիտակ կտորից կտրում ենք գոգնոցանման դետալ .



24. Ամրացնում ենք այն արջուկի կրծքին: Կարելի է այն ամբողջությամբ չկարել, այլ վերին ծայրերով ամրացնել գլխի հետևի հատվածում:



Մեր արջուկը պատրաստ է`

